Կարգապահական գործ թիվ ԿԳ-15073

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 177-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/100-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝Ալեքսանդր Սիրունյանի , Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Կարեն Մեժլումյանի,

Քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի,

Քննության առնելով պատասխանող՝ փաստաբան **Սերգեյ Հարությունյանին (արտոնագիր թիվ 1460)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի՝ **2015 թվականի հունիսի 1-ի** տեղեկանքի համաձայն անդամավճարի գծով Պատասխանողի պարտքը կազմել է **50.000** Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը

Պատասխանողի կողմից սահմանված անդամավճարը չմուծելու **2015 թվականի հունիսի 1-ին** վերջինիս նկատմամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19 հոդվածի առաջին մասի 5-րդ կետի «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ եւ կարգապահական գործը հանձնվել է Խորհուրդ:

3. Պատասխանողի բացատրությունները

Պատասխանողը ըստ էության բացատրություն չի տվել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում այն, որ **2015 թվականի հունիսի 1-ի** դրությամբ անդամավճարի գծով Պատասխանողի պարտքը կազմել է **50.000** Հայաստանի Հանրապետության դրամ, որը, սակայն, սույն կարգապահական գործի քննության պահի դրությամբ ամբողջությամբ վճարվել է (հիմք՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի **2015 թվականի սեպտեմբերի 25-ի տեղեկանքը**):

5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները

Կարգապահական գործի քննությամբ Պատասխանողին բացասական բնութագրող ապացույցներ ձեռք չեն բերվել:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Վերոգրյալի հաշվառմամբ, Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման, քանի որ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված՝ Անդամավճարների, մուտքի եւ այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգի 17-րդ կետի համաձայն առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման:

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի հինգերորդ մասի 14–րդ կետով, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետով, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի հինգերորդ մասի 2-րդ կետով, Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Սերգեյ Հարությունյանի (արտոնագիր թիվ 1460) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:***
2. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուղարկել փաստաբան Սերգեյ Հարությունյանին:***

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում եւ օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Ալեքսանդր Սիրունյան**